

# “ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, Ի 60 ԱՄԵԱԿԻՆ”

Միրով մեր նախնեաց փառքին՝ մըխեցար անյատակ անդունդ.  
Հին հին դարերու ծոցէն՝ հանելու հայ մըտքին ծընունդ.  
Գրտար գաղտակուր պայծառ, մարգարիտ արժէքով անգին,  
Քայտեր գոյնըգոյն վայել հանճարի ոսկեհուն թագին:

Քրքրոհնք ու վաստակ անչափ բազ եւ բաժ հնկաւ քեզ անվերջ,  
Բայց շիթն ու կայլակ ճակտիդ հիւթ տըլին ամպերուն ըստերջ:  
Բուսաւ մըշակոյթ առոյգ, հայրենի սուրբ հողին պարծանք,  
Արդիւնքն մըթերուած համբար, լեցուեցան նոր զինուով հընձանք:

Վըտառ առ վըտառ մըշուշ ցրրուեցաւ աշխարհէն ի բաց,  
Յընձաց համաշխարհ ուրախ լոյսերու շողերով արբած:  
Հարսերն ծընկասէր զըւարթ՝ սիգանեմ՝ պընձազարդ թագով,  
Ելան ասպարէզ արձակ, երգելու արեւին սուրբ գով:

Դիւցազն, թագաւոր, դրպիր, փառապանձ դարերու ծընունդ,  
Շողքով ու փառքով յայտնի, երեւցան ի հանդէս գունդ գունդ.  
Կըրակն յանթեղի հանգչած բոց կու տայ նորաբեր շեղքին,  
Չայնիկն հայրենի կուրծքէ կը ցընցէ ամէն սիրտ նըրբին:

Վաթսուն տարիներ անդուլ, ժիր սուզակ, հընութեան խորքէն  
Բերիր անհամար գանձեր, կողոպուտ խաւարի զըրկէն.  
Գործերդ թող ըլլան կոթող, ճշմարիտ պարծանքի առիթ,  
Ձի ծոցդ մըթերուած վաստակ արդիւնքն է քրտնաթոր վարիդ:

Սուզակ, մի կասիր, յառանջ, դէպ ի խոր անդունդներ անհուն.  
Թէպէտ քաջըստոյգ ուղիդ, փայտակերտ նաւդ եւ հողդ սահուն.  
Բայց սէրն հայրենեաց քեզ ոյժ, եւ տոհմիկ մշակոյթն խրախոյս.  
Նոր բերք կը սպասէ աշուն, նորագիտ ըննութիւն եւ խոյզ:

Հ. Մ. Ա.



# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12      ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ      Կ. ՏԱՐԻ 1946

## “ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, Ի 60 ԱՄԵԱԿԸ 1887—1946”

“Հանդէս Ամսօրեայ, հայագիտական ուսումնասիրութիւն կը բուրբէ իր 60ամեայ շրջանը:

Առանց տարակուսի այսպէս անշուք պիտի չողջունէինք Հայագիտական Ուսումնասիրութիւն այս հասուն տարիքը, եթէ Հարկադրէին զմեզ այժմեան քաղաքական եւ տնտեսական պայմանները:

Հայ Մշակոյթի պատմութեան մէջ առանձին գլուխ կը կազմէ “Հանդէս Ամսօրեայ” ի 60ամեայ գործունէութիւնը: Հայ Բանասիրութիւնը, որ անտեսուած էր, ձեւ եւ կերպարանը առաւ “Հանդէս Ամսօրեայ” ի մէջ: Ծնունդ առին հոն նոր բանասէրներ եւ բարգաւաճեցին ծաղկալից մըգաշատ: Հայագիտութեան Բարեկամները, տոհմիկ եւ օտար, իրենց ժամադրաւայրը ընտրեցին այս Հայագիտական Ուսումնասիրութիւնը: Այն տեղ լսելի ըրին իրենց ծայնը: Անոնց ծաղկեալ գրչէն լոյս տեսան հոն քաղմագան եւ երկարաշունչ ուսումնասիրութիւններ: Հետազոտուեցան հոն Հայագիտութեան գանազան մարգեր: Ազգ եւ Աշխարհ, Լեզու եւ Պատմութիւն, Գիր եւ Գրականութիւն, Ազգագրութիւն եւ Հնախօսութիւն ունեցան հոն իրենց մասնագէտները:

Լուրջ աշխատանքներ տարուեցան հոն: Կատարուեցան պեղումներ հայրենի աշխարհին աւերակներու մէջ. խուզարկուեցան Մատենադարաններ, նախնեաց ծանօթ եւ անծանօթ գրաւոր մնացորդներն լոյս աշխարհ հանելու, անոնց արժէքը գնահատելու. անոնց վրայ յեցած հայ մշակոյթի արգասիքները արժէքաւորելու, հայ կեանքի ծալքերը լուսաւորելու, հայ մտքի ստեղծագործութիւնները մշտնջենաւորելու:

Ո՞ր աչք չի հրճուիր ի տես այն քաղմագանուն ուսումնասիրութիւններու, զորոնք հիւրընկալեց “Հանդէս Ամսօրեայ” 60 տարիներէ ի վեր իր հիւրասէր ծոցը: Անոնք կատարուած վաստակներ են հայագիտութեան համար:

Անշուշտ առանց քրտինքի ի գլուխ չէին ելած այդ աշխատանքները: Ինչ որ խուսափած էին ստանձնել ազգային քաղմագանէ՛ի պարբերութիւններ յընթացս 60 տարիներու, խիզախութիւնն ունեցած էր “Հանդէս Ամսօրեայ” քառնալ իր ուսերուն վրայ եւ անխոնջ եւ աննկուն քայլերով տանիլ 60 տարիներու երկայնածիզ ճանապարհին վրայ: Բրտինքի կայլակներ թըջեցին, այո՛, այդ ճանապարհը. քայց ուրախ է ինքն այսօր, նկատելով որ այդ շիթերը բուսցուցին իր հետքերուն վրայ ծաղիկներ ի պայծառութիւն հայ մշակոյթին:

Գնահատուեցան աշխատանքը: Ազգային լայն խաւերէն որակուեցաւ “Հանդէս Ամսօրեայ” “չոր ու ցամաք ուսումնասիրութիւն, մատչելի միայն մասնագէտներու”: Բայց կարող էին ոչ-մասնագէտները գէթ գնահատել աշխատանքը եւ քաջալերել զայն յօգուտ մասնագէտներու: Այդ մասնագէտ մշակները դրած էին իրենց ոյժը ի սպաս հայ մշակոյթին. պէտք էր քաջալեր հանդիսանալ անոնց, որ անվատ յառաջ վարէին վարուցանք:

Ինչ որ անգիտացաւ ընել անցեալը, կը մտղթենք որ ներկան գիտակցի կատարել: Իսկ “Հանդէս Ամսօրեայ” պիտի շարունակէ իր բռնած ուղին անվներ:

ԽՄԻՍԿԻՆԻՍԻՆ “ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”